# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## ԹՄՐԱԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

*ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ*

**2011 թ. 9** ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



**ԵՐԵՎԱՆ - 2011**

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը խոր արմատներ է գցել ողջ աշխարհում և դարձել մեծ ու փոքր պետությունների գերխնդիրներից մեկը: Այն ազդում է ոչ միայն այդ երկրների սոցիալ-

տնտեսական կառուցվածքների, այլև քաղաքական և միջազգային հարաբերությունների վրա և աստիճանաբար վերաճելով համընդհանուր խնդրի, առաջ բերում պայքարի համակողմանի համագործակցության անհրաժեշտություն:

Աշխարհի 170 երկրներում 200 միլիոնից ավելի մարդ ներգրավված է այս հանցավոր ոլորտում: Նրանց միջոցով տարեկան իրականացվում է շուրջ 500 միլիարդ դոլարի թմրամիջոցների առք ու վաճառք, ինչը կազմում է միջազգային ապրանքաշրջանառության մոտ 10,0 տոկոսը:

Ըստ համաշխարհային համագործակցության գնահատման՝ յուրաքանչյուր երկրի անվտանգությունը սպառնացող հիմնական վտանգը մնում է միջազգային ահաբեկչությունը, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է միջազգային շուկաներում թմրամիջոցների իրացումից ստացվող գումարները:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ ձեռք բերված միջոցներով ստեղծվում են հանցավոր խմբեր, որոնց գործունեությունը ոչ միայն ազդում է երկրների ներքին ու արտաքին քաղաքականության վրա, այլև՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը դառնում ողջ աշխարհի գերխնդիրներից մեկը, բացասական ազդեցություն թողնում ազգերի գենոֆոնդի վրա:

Ըստ գնահատման արդյունքների, ափիատների խմբին պատկանող թմրամիջոց չարաշահողների թիվը կազմել է մոտ 16 միլիոն մարդ, որից 11 միլիոնը հանդիսանում են հերոին տեսակի թմրամիջոցի չարաշահողներ: Մոտ 13 միլիոն մարդ օգտագործում է կոկաին տեսակի թմրամիջոց:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչությունը, համագործակցելով ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հետ, 2011թ. 9 ամիսների

ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է հանցագործության ***1108*** և վարչական իրավախախտման ***185*** դեպք /2010 թ. 9 ամիսների ընթացքում՝ 1152 հանցագործությունների և 205 վարչական իրավախախտման դեպք/:




**Գրաֆիկ 1**. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունների և իրավախախտումների թվային պատկերը 2010-2011թթ. 9 ամիսների ընթացքում.

| ՀՀ ՔՐ․ՕՐ-Ի ՀՈԴՎԱԾՆԵՐ | | 2010թ. 9 ամիս | 2011թ. 9 ամիս | | |
|---|---|---|---|---|---|
| 266-274 հոդվածներ | | ***1152*** | ***1108*** | | |
| Այդ թվում | 266 հ 1 և 2 մասեր | 388 | 467 | | |
| | 266 հ 3 մաս | 132 | 78 | | |
| | 266 հ 4 մաս | 78 | 26 | | |
| | 267 հ | 0 | 0 | | |
| | 268 հ | 549 | 526 | | |
| | 269 հ | 0 | 2 | | |
| | 270 հ | 0 | 0 | | |
| | 272 հ | 0 | 2 | | |
| | 273 հ | 4 | 7 | | |
| | 274 հ | 1 | 0 | | |

**Աղյուսակ 1.** 2010-2011թթ. 9 ամիսների ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունները՝ ըստ ՀՀ քր.օր-ի համապատասխան հոդվածների.




**Գրաֆիկ 3.** 1998-2010թթ. և 2011թ. 9 ամիսների ընթացքում հանրապետությունում հայտնաբերված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քանակական պատկերը.

2011 թ. 9 ամիսների ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում կատարված հանցագործությունների հայտնաբերման արդյունքում, ապօրինի շրջանառությունից ընդհանուր առմամբ հայտնաբերվել և առգրավվել է ***107 կգ 840 գրամ*** տարբեր տեսակի թմրամիջոց, ***60.1 գր*** հոգեմետ դեղահաբ, ***673.6*** միլիլիտր պրեկուրսոր /2010թ. 9 ամիսների ընթացքում` 72 կգ 534 գրամ, 64.6 գր հոգեմետդեղահաբ և 16240 միլիլիտր պրեկուրսոր/:

| ԹՄՐԱՄԻՋՈՑԻ, ԴԵՂԱՀԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 2010թ. 9 ամիս /գր/ | 2011թ. 9 ամիս /գր/ | +, - |
|---|---|---|---|
| ՄԱՐԻԽՈՒԱՆԱ | 32704 | 11277.5 | -21426.5 |
| ՀԱՇԻՇ | 1035.4 | 134.21 | -901.2 |
| ՀԱՇԻՇԻ ՅՈՒՂ | 0.715 | 73.41 | +72.7 |
| ԱՓԻՈՆ | 8792.1 | 988.6 | -7803.5 |
| ԿԱԿԱՉԻ ԾՂՈՏ | 12.86 | - | -12.86 |
| ԿՈԿԱԻՆ | - | 2.209 | +2.209 |
| ԱՑԵՏԻԼԱՑՎԱԾ ԱՓԻՈՆ | 34.4 | 26.661 | -7.74 |
| ՀԵՐՈԻՆ | 6969.37 | 90046.9 | +83077.5 |
| ԲՈՒՊՐԵՆՈՐՖԻՆ | 8.98 | 32.14 | +23.1 |
| ՄՈՐՖԻՆ | 1.19 | 0.008 | -1.18 |
| ՄԵՏԱԴՈՆ | 42.17 | 0.015 | -42.15 |
| ԿՈԴԵԻՆ | 19.37 | 16.46 | -2.91 |
| ԱՄՖԵՏԱՄԻՆ | 37.5 | 3999.9 | +3962.4 |
| ՄԵՏԱՄՖԵՏԱՄԻՆ | 22875.8 | 1241.7 | -21634.1 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ`** | **72533.8** | **107839.8** | **+35306** |

**Աղյուսակ 2.** 2010-2011թ. 9 ամիսների ընթացքում հանրապետությունում իրավապահ մարմինների կողմից ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցները, հոգեմետնյութերը ըստ տեսակների և քաշերի

| Ոստ. ՄՎ, բաժին | ԸՆԴԱՄԵՆԸ | | ՀԱՆՑԱԳՈՐԾ | | ԻՐԱՎԱԽԱԽՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2010** | **2011** | **2010** | **2011** | **2010** | **2011** |
| Շենգավիթ | 58 | 83 | 48 | 69 | 10 | 14 |
| Էրեբունի | 124 | 88 | 118 | 84 | 6 | 4 |
| Կենտրոնական | 222 | 196 | 221 | 193 | 1 | 3 |

| Ոստ. ՄՎ, բաժին | ԸՆԴԱՄԵՆԸ | | ՀԱՆՑԱԳՈՐԾ | | ԻՐԱԱԽԱԽՏ | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2010** | **2011** | **2010** | **2011** | **2010** | **2011** |
| Ստեփանավան | 8 | 5 | 8 | 4 | 0 | 1 |
| Տաշիր | 7 | 6 | 6 | 5 | 1 | 1 |
| **ԼՈՌԻ** | **98** | **68** | **75** | **49** | **23** | **19** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ար աբ կ ի ր | 53 | 144 | 40 | 131 | 13 | 13 |
| Մե ք աս տի ա | 67 | 89 | 51 | 85 | 16 | 4 |
| Նո ր Նո ր ք | 79 | 71 | 70 | 46 | 9 | 25 |
| Մաշ տո ց | 32 | 14 | 32 | 14 | 0 | 0 |
| Քան աք - Զե յ թո ւ | 42 | 40 | 42 | 33 | 0 | 7 |
| Մե տր ո պո լ ի տ | 5 | 2 | 5 | 2 | 0 | 0 |
| **ԵՐԵՎԱՆ** | **682** | **728** | **627** | **657** | **55** | **71** |
| Աշ տար ակ | 40 | 15 | 26 | 15 | 14 | 0 |
| Ապար ան | 7 | 3 | 3 | 2 | 4 | 1 |
| Ար ագ ած | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 |
| Թալ ի ն | 5 | 4 | 2 | 3 | 3 | 1 |
| **ԱՐԱԳԱԾՈՏՆ Ի** | **52** | **23** | **31** | **21** | **21** | **2** |
| Ար տաշ ատ | 31 | 26 | 21 | 16 | 10 | 10 |
| Ար ար ատ | 20 | 24 | 13 | 12 | 7 | 12 |
| Մաս ի ս | 10 | 36 | 9 | 29 | 1 | 7 |
| **ԱՐԱՐԱՏ** | **61** | **86** | **43** | **57** | **18** | **29** |
| Ար մ ավ ի ր | 45 | 71 | 35 | 66 | 10 | 5 |
| Բաղ ր ամ յ ան | 5 | 5 | 4 | 5 | 1 | 0 |
| Վաղ ար շ ապա | 33 | 18 | 27 | 11 | 6 | 7 |
| Մե ծ ամ ո ր | 78 | 8 | 75 | 6 | 3 | 2 |
| **ԱՐՄԱՎԻՐ** | **161** | **102** | **141** | **88** | **20** | **14** |
| Գավ առ | 3 | 5 | 3 | 5 | 0 | 0 |
| Ճամ բ ար ակ | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Մար տո ւ ն ի | 5 | 10 | 5 | 7 | 0 | 3 |
| Սե ւ ան | 11 | 3 | 7 | 1 | 4 | 2 |
| Վար դ ե ն ի ս | 2 | 4 | 2 | 4 | 0 | 0 |
| **ԳԵՂԱՐՔՈՒՆ ԻՔ** | **22** | **23** | **18** | **18** | **4** | **5** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ ր ազ դ ան | 33 | 56 | 27 | 52 | 6 | 4 |
| Կո տայ ք | 24 | 19 | 11 | 16 | 13 | 3 |
| Նաի ր ի | 8 | 13 | 6 | 8 | 2 | 5 |
| Չ ար ե ն ց ավ ան | 12 | 10 | 7 | 6 | 5 | 4 |
| **ԿՈՏ ԱՅ Ք** | **77** | **98** | **51** | **82** | **26** | **16** |
| Գյ ո ւ մ ր ի | 102 | 71 | 76 | 57 | 26 | 14 |
| Ախո ւ ր յ ան | 5 | 10 | 5 | 8 | 0 | 2 |
| Ամ աս ի ա | 2 | 2 | 2 | 2 | 0 | 0 |
| Ան ի | 2 | 4 | 2 | 1 | 0 | 3 |
| Աշ ո ց ք | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Ար թ ի կ | 4 | 7 | 4 | 7 | 0 | 0 |
| **ՇԻՐԱԿ** | **116** | **95** | **90** | **76** | **26** | **19** |
| Կապան | 13 | 8 | 8 | 7 | 5 | 1 |
| Գո ր ի ս | 11 | 25 | 10 | 21 | 1 | 4 |
| Մե ղ ր ի | 12 | 5 | 12 | 5 | 0 | 0 |
| Սի ս ի ան | 4 | 3 | 4 | 3 | 0 | 0 |
| **ՍՅ ՈՒՆԻՔ** | **40** | **41** | **34** | **36** | **6** | **5** |
| Եղ ե գ ն աձ ո ր | 3 | 3 | 2 | 2 | 1 | 1 |
| Վայ ք | 4 | 3 | 2 | 2 | 2 | 1 |
| Ջե ր մ ո ւ կ | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| **ՎԱՅ ՈՑ ՁՈՐ** | **8** | **7** | **5** | **5** | **3** | **2** |
| Իջ ե ւ ան | 4 | 6 | 4 | 5 | 0 | 1 |
| Նո յ ե մ բ ե ր յ ան | 4 | 4 | 4 | 4 | 0 | 0 |
| Տ ավ ո ւ շ | 1 | 3 | 1 | 2 | 0 | 1 |
| Դի լ ի ջ ան | 12 | 1 | 10 | 1 | 2 | 0 |
| **Տ ԱՎՈՒՇ** | **22** | **14** | **20** | 12 | **2** | **2** |
| Տ ր ան ս պո ր տ. վ ար չ | 9 | 4 | 9 | 4 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վանաձոր | 41 | 32 | 34 | 21 | 7 | 11 |
| Գուգարք | 9 | 6 | 6 | 3 | 3 | 3 |
| Թումանյան | 17 | 10 | 12 | 10 | 5 | 0 |
| Սպիտակ | 16 | 9 | 9 | 6 | 7 | 3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Զվարթնոց օդ/կ | 9 | 5 | 8 | 3 | 1 | 2 |
| ԿՀԴՊ ԳՎ | 373 | 381 | 373 | 381 | 0 | 0 |
| **ԸՆԴ. ՀՀ-ում** | **1357** | **1293** | **1152** | **1108** | **205** | **185** |

**Աղյուսակ 3.** Հանրապետության տարածքում ոստիկանության ստորաբաժանումների կողմից թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում հայտնաբերված հանցագործությունների և իրավախախտումների համառոտ պատկերը

2011թ. 9 ամիսների ընթացքում թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության է ենթարկվել ***470 անձ*** /2010թ. 9 ամիսներին` 605 անձ/, նրանցից ***11-ը***` կանայք են, ***6-ը***` անչափահաս, ***16-ը***` օտարերկրացի /2010թ. 9 ամիսներին` 12-ը կանայք են, 2-ը` անչափահաս և 49-ը` օտարերկրացի/: Քրեական պատասխանատվության ենթարկված անձանցից ***86-ը*** եղել են նախկինում դատապարտված /2010թ. 9 ամիսներին` 116-ը/: ՀՀ քր. օր-ի 266-րդ հոդվածի հատկանիշներով քրեական պատասխանատվության են ենթարկվել ***155*** անձ /2010թ. 9 ամիսներին` 269/, այդ թվում ***26-ը***` նախկինում հանցագործություն կատարած անձինք են /2010թ. 9 ամիսներին` 48-ը/:

| | 2010Ã. 9 ³ÙÇë | | 2011Ã. 9 ³ÙÇë | |
|---|---|---|---|---|
| | անձինք | տոկոսը | անձինք | տոկոսը |
| Ընդամենը | 605 | X | 470 | X |
| Այդ թվում կին | 12 | 1,9 | 11 | 2,3 |
| Անչափահաս | 2 | 0,3 | 6 | 1,3 |
| 18-ից 24 տարեկան | 42 | 6,9 | 33 | 7 |
| 25-ից 29 տարեկան | 61 | 10,2 | 52 | 11,1 |
| 30-ից 49 տարեկան | 416 | 68,7 | 297 | 63,2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 50-ից բարձր | 84 | 13,9 | 82 | 17,4 |
| Օտարերկրացի | 49 | 8,1 | 16 | 3,4 |

**Աղյուսակ 4.** Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց տարիքային կազմը




**Գրաֆիկ 4.** Թմրամիջոցների, հոգեմետնյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալական կազմը

Հանրապետությունում 2011թ. 9 ամիսների ընթացքում առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ օգտագործելու համար հաշվառման են վերցվել 855 անձ /նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 908 – ի դիմաց/:

| Հաշվետու ժամանակը | օգտագործել են /անձ/ | | | |
|---|---|---|---|---|
| 2010թ. 9 ամիս | 908 | | | |
| 2011թ. 9 ամիս | 855 | | | |
| | | | | |

**Աղյուսակ 5.** ՀՀ իրավապահ մարմինների կողմից ՀՀ առողջապահության նախարարության <<Հոգեբուժական բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ներկայացրած անձանց օգտագործած թմրամիջոցների տեսականին

2010Ã. 9 ³ÙÇë




2011Ã. 9 ³ÙÇë




**Գրաֆիկ 5.** Առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ գործածած և հաշվառման վերցված անձինք` ըստ օգտագործած թմրամիջոցների տեսակների

2010թ. 9 ամիսներին

2011թ. 9 ամիսներին







**Գրաֆիկ 6.** Առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ գործածած և հաշվառման վերցված անձանց տարիքային կազմը

ՀՀ ոստիկանության 2011թ. հիմնական կազմակերպչական միջոցառումների պլանի 2.1.5 կետի և ՀՀ ոստիկանության ղեկավարության հանձնարարականի համաձայն, 2011թ. օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում հանրապետությունում իրականացվել է **<<Կանեփ-կակաչ -2011>>** համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը, որի նպատակն էր հայտնաբերել և ոչնչացնել վայրի կերպով աճած կամ հատուկ աճեցված կանեփի և կակաչի կանաչ զանգվածներ: Ընդհանուր առմամբ հայտնաբերվել և այրման միջոցով ոչնչացվել է ***84 տոննա 511.6 կգ*** կանեփի և ***64 կգ*** կակաչի կանաչ զանգվածներ:

Բացի ոստիկանության ծառայողներից միջոցառմանը ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ծառայողները, տեղական ինքնակառավարման մարմինների եւ զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները:

Ձեռք բերված օպերատիվ տեղեկությունների շնորհիվ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության, մարզային վարչությունների և նրանց ենթակա բաժինների աշխատակիցների կողմից անցկացված համատեղ միջոցառումների արդյունքում 73 քաղաքացիների տնամերձ հողամասերից և շինություններից հայտնաբերվել և առգրավվել է 1178.6 կգ կանեփի կանաչ զանգված, որոնցով նախապատրաստված նյութերով կատարվում է հետաքննություն:

Բացի այդ, հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 39 դեպք: Նշված հանցագործությունների հայտնաբերման արդյունքում ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է 3 կգ 547 գրամ □մարիխուանա□ տեսակի թմրամիջոց, 55 հատ տարբեր տեսակի դեղահաբեր: Ոստիկանության աշխատակիցների կողմից տարված բացատրական աշխատանքների շնորհիվ բնակչության կողմից կամավոր հանձնվել է 4 հատ հրացան, 232 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ:




**Գրաֆիկ 7.** <<Կանեփ-կակաչ>> համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման ընթացքում հայտնաբերված և ոչնչացված թմրանյութ պարունակող բույսերի քանակական պատկերը` ըստ տարիների /կգ/

2011թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել

-մորֆին 1% 1մլ - 68000 հատ սրվակ

- մորֆին – 2500 հաբ

-օմնոպոն 2% 1մլ - 68000 հատ սրվակ

-պրոմեդոլ 2% 1մլ - 16000 հատ սրվակ

-ֆենտանիլ 0.005% 1մլ - 128000 հատ սրվակ

եւ բաշխվել թվով 105 հիվանդանոցների /Երեւան-42/ եւ Երեւան քաղաքի օնկոլոգիական հիվանդներին: Ներկայումս հաշվառման են գտնվում 180 օնկոլոգիական հիվանդ եւ 137 մետադոնային բուժում ստացող թմրամոլ:

Հանրապետությունում 2009թ. իրականացվող մետադոնային ծրագրի շրջանակներում 2011թ. ներմուծվել է նաեւ մետադոնի 5մլգ N100 - /150 տուփ/, 10 մլգ N100 /617 տուփ/, 40 մլգ N100 /400 տուփ/:

Երեւանում գործում են 76 դեղատներ /65 ֆիրմաներ/, որոնք վաճառում են հոգեմետ դեղամիջոցներ, 21 ֆիրմա ներմուծում է հոգեմետ դեղամիջոցներ, 1 ֆիրմա արտադրում է 9 անվանում հոգեմետ դեղամիջոցներ: Թմրամիջոցների ներմուծելու լիցենզիա ունեն 4 ֆիրմա:

Հանրապետությունում հսկվող քիմիական նյութերի և պրեկուրսորների շարժը գտնվում է ԿՀԴՊ ԳՎ 4-րդ վարչության աշխատակիցների հսկողության տակ, համաձայն որի պարբերաբար ներկայացվում են հաշվետվություններ:

Ընդհանուր առմամբ արտադրական կարիքների համար Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 3857530 կգ պրեկուրսոր եւ արտահանվել 2000 կգ ացետոն:



| | |
|---|---|
| Սուրուտեքս /1 հաբ/<br>մեծածախ /1գր/ | 100-110 ԱՄՆ $<br>50-60 ԱՄՆ $ |
| Տրամադոլ /10 հաբ/ | 13 ԱՄՆ $ |
| Էքստազի /1 հաբ/<br>մեծածախ /1հաբ/ | 50 ԱՄՆ $<br>20-25 ԱՄՆ $ |

| Թմրամիջոցի տեսակը | Գինը |
|---|---|
| Կոկաին /1գր/ | 250-300 ԱՄՆ $ |
| Ափիոն /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 50-80 ԱՄՆ $<br>25-30 ԱՄՆ $ |
| Կակաչի ծղոտ /1 գր/ | 80 ԱՄՆ ցենտ |
| Հոլանդական մարիխուանա /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 40-50 ԱՄՆ $<br>30 ԱՄՆ $ |
| Մարիխուանա /1գր/<br>մեծածախ /1գր/ | 20-20 ԱՄՆ $<br>10-12 ԱՄՆ $ |
| Հաշիշ /1 գր/ | 40-50 ԱՄՆ $ 40-50 |
| Մորֆի /1 %, 1 սրվակ/ | 15-20 ԱՄՆ $ |
| Հերոին /1 գր/<br>մեծածախ /1գր/ | 100-110 ԱՄՆ $<br>50-60 ԱՄՆ $ |

**Աղյուսակ 6.** Թմրամիջոցների մանրածախ գները Հայաստանի Հանրապետության ‘‘սև’’ շուկայում